«ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ» ԳՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանասիր. գիտ. դոկտոր Ե. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արևմտահայ գրականության ուսումնասիրությունը վերջին տասնամյակում նկատելի առաջընթաց ապրեց։ Տպագրվեցին արժեքավոր մենագրություններ ու հոդվածներ արևմտահայ դրողների և գրականության հետաքրքրություն հարուցող հարցերի մասին, բացահայտվեցին և լուծվեցին մի շարք կարևոր խնդիրներ։ Չնայած դրան, այնուամենայնիվ, քիչ չեն վիճելի, սակավ լուսաբանված հարցերը։ Դրանցից մեկն էլ, այսպես կոչված, «հեթանոսական» հոսանքի հարցն է, որի շուրջը բանավեճերը շարունակվում են մինչև օրս։

1

Ե՛վ անցյալում, և՛ մեր օրերում արևմտահայ կյանքի ու գրականության մասին գրված որոշ ուսումնասիրություններում երբեմն նկատելի է հարցի ոչ կոնկրետ-պատմական քննություն, որի հետևանքով արևելահայ կյանքի և գրականության համար բնորոշ երևույթները մեխանիկորեն փոխադրվում են արևմտահայ իրականություն, անտեսելով երկու հատվածների սոցիալ-քաղաքական կյանքով, գրականության զարգացման օբյեկտիվ ընթացքով պայմանավորված էական տարբերությունները։

Եթե խոսքը հոսանքի մասին է, ասել է թե մենք գործ ունենք ոչ թե մասնավոր փաստի, պատահական երևույթի, այլ խորապես հասարակական բովանդակությամբ հագեցված գրական շարժման հետ։ Նման պարագայում հարկավոր է բացահայտել հասարակական այն պայմանները, որոնք նպաստեցին հիշյալ հոսանքի ծավալմանը։

Ինչպիսի՞ իրադարձություններում ձևավորվեց «հեթանոսական» հոսանքը, ի՞նչ հանգամանքներ նպաստեցին վերջինիս տարածմանը, ո՞րն է «հեթանոսական» հոսանքի գաղափարական ակունքը, ի՞նչ քաղաքական իդեալ էր պաշտպանում շարժումը։ Առանց աչքաթող արված վերոհիշյալ հարցերին պատասխանելու, անկարելի է տալ «հեթանոսական» հոսանքի գիտական ճիշտ մեկնաբանությունը։

Հայ ժողովրդի պատմության հեթանոսական ժամանակների պատկերումը, Ուժի, Գեղեցիկի պաշտամունքի շեփորումը 1910-ական թթ. արևմտահայ գրականության, մասնավորաբար պոեզիայի առաջատար մոտիվներն էին։ Ժողովրդի պատմության հեռավոր շրջանը արտացոլված է Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր», Վ. Թեքեյանի «Հրաշալի հարություն» բանաստեղծությունների ժողովածուներում, Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայում, Ռ. Զարդարյասի «Բաղինին փառաբանությունը» արձակ երկում, Սիամանթոյի, Ահարոնի, Հ.

Տեր-Սահակյանի, Տ. Գասպարյանի, Հ. Սուրենյանի, Լ. Էսաճանյանի բանաստեղծություններում։ Նշված հեղինակների անունների թվարկումն իսկ հաստատում է, որ իրոք, մենք գործ ունենք ոչ թե պատահական երևույթի, մասնավոր փաստի, այլ արևմտահայ իրականությունից բխող հասարակական տրամադրությունները գեղարվեստորեն արտացոլող նշանավոր գրողների մի ամբողջ խմբի՝ հոսանքի հետ։

«Հեթանոսական» հոսանքը արևմտահայ իրականության ծնունդ է, արևմտահայ գրականության միայն բնորոշ երևույթ։ Ավելին. «հեթանոսական» հոսանքը արևմտահայ ազատագրական շարժման արդյունքն է, ազատագրական, հայրենասիրական դաղափարների գեղարվեստական յուրահատուկ արտացոլում։ Վարուժանի, Թեքեյանի, Սիամանթոյի, Շանթի և Չարդարյանի երկերում արտահայտված հեթանոսական մոտիվները խորունկ արդիականությամբ էին հագեցված։ «Հեթանոսական» հոսանքի այդ ամենաբնորոշ կողմն է, որ ժամանակին, ցավոք, անտեսվեց արևելահայ քննադատության կողմից։

1908 թ. հուլիսյան հեղաշրջմանը հաջորդած տարիները Թուրքիայում նշանավորվեցին որպես երկրի տնտեսական կյանքի, հայ ժողովրդի մշակույթի զարգացման, մտավոր սթափման տարիներ։ «Եթե անկողմնակալ ոգով քննենք այն, ինչ իրականացավ 5—6 տարիներու ընթացքին Թրքահայ կյանքին մեջ,— գրում է Չ. Եսայանը,— առանց վարանելու կարելի է հրաշք նկատել»[1]։

Այդ «հրաշքի» ցայտուն արտահայտությունը պետք է համարել արևմտահայ գրականության բոլոր ճյուղերի, հատկապես բանաստեղծական արվեստի բուռն զարգացումը։ Սիամանթոյի և Վարուժանի ոգեշունչ բանաստեղծությունները վկայում են, թե այդ շրջանում ինչ բարձունքներ էր նվաճել արևմտահայ բանաստեղծական արվեստը։

Այդ «հրաշքի» արտահայտություն պետք է համարել ժողովրդական լայն զանգվածների մտավոր սթափումը, որին առանձնապես նպաստեցին մամուլի, մշակութային կյանքի մինչ այդ աննախադեպ աշխուժությունն ու եռուզեռը (Աբելյան-Արմենյան, Սևումյան թատերախմբերի հյուրախաղերը, գրական ասուլիսները, Կոմիտասի երգչախմբի ելույթները), մանավանդ՝ հայոց գրերի գյուտի 1500 և հայկական տպագրության 500-ամյա հոբելյանները, որոնք տոնվեցին արտակարգ շուքով և համազգային մասշտաբով, ամենուրեք ստեղծելով հայրենասիրական խանդավառության մթնոլորտ։

«Հետո եկան տեսիլներու օրերը,— գրում է ժամանակակիցներից Հ. Սիրունին,— 1913-ին զուգադիպող երկու մեծ տոները՝ հայ տառերու գյուտին և հայ տպագրության գույգ հոբելյանները, հայ գրողներու սրտին մեջ նոր կրակ մը դրին։ Անոնց պատմեցին դարերու բերած հեքիաթը ու տոչորեցին զանոնք հին օրերու կարոտով։ Ամենուն սրտին մեջ նոր կայծ մը ինկավ։ Դարերը կբերևին այդ կայծը»[2]։

Հայ ժողովրդի ազատագրություն տաճկական յաթաղանից, քաղաքական ինքնուրույն կյանք. այս էր դարերի այդ անմար կայծի էությունը։ 1910-ական թթ. սկզբներին կրկին հրապարակ իջավ հայկական հարցը՝ «հեթանոսական» հոսանքի ծավալման ամենակարևոր գործոնը։ «Երկունքի տարի մը եղավ այսպես 1913-ը,— գրում է Սիրունին։— ...Հայկական դատն էր, որ այդ տար-

[1] Չ. Եսայան, «Թրքահայ ժամանակակից գրողներ», Թիֆլիս, 1916, էջ 36։
[2] Հ. Սիրունի, «Դանիել Վարուժան», Պոսթրնշ, 1940, էջ 14։

վան մեջ մարմին կառներ վերստին, բազմիցս լքվելե ու թափվելե, քանիցս անգոսնվելե ու ուրացվելե հետո»[3]։

Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, Թուրքիայում հենց այդ տարիներին ամենալուրջ վտանգի տակ էր արևմտահայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։ Հայտնի է, որ հենց այս տարիներին կառավարող Երիտթուրքերի կուսակցության վերնախավը կալմեց հայաջինջ քաղաքականության իրականացման հրեշավոր ծրագրերը։

Մամուլը սրտի թրթիռով էր արձագանքում միջազգային այն իրադարձություններին, որոնք այս կամ այն չափով կապված էին հայ ժողովրդի ազատագրության հետ, անկեղծորեն հավատալով եվրոպական դիպլոմատիայի կեղծ խոստումներին, չտեսնելով բուրժուական մեծ պետությունների կողմից հայկական հարցի շուրջը կատարվող շահադիտական ստոր գործարքները։ Ամենքը անկեղծորեն հավատացած էին, որ վերջապես հասել են հայկական դատի լուծման երանելի ժամանակները, նոր կյանքի արևածագը։ «Ու 1914-ը հայ ժողովրդին համար հույսի տարի մը եղավ,— գրում է Հ. Սիրունին։— Հավատացին բոլորը, Ոն խաղաղությունը իր բարիքները պիտի տանի փռե հայկական նահանգներու մեջ։ Անուշ հեռանկար մը կոգևորեր ամենքս։ Ու հայ գրողը իր հոգին լեցուց հայրենի հողին քաղցրությունովը ու պապակովը նոր արշալույսի մը, որ պիտի ծլեր այդ հողեն»[4]։ Համազգային այս իդեալի գեղարվեստական խտացած արտահայտություն պետք է համարել 1914 թ. նախաշեմին հրատարակված Դ. Վարուժանի և Հ. Սիրունու խմբագրած «Նավասարդ» հանդեսը, մանավանդ Վարուժանի «Նավասարդյան» հայտնի կոչ-բանաստեղծությունը.

Հանեարդ հայկյան, Նավասարդյան, սա տոներուն
Արևափառ՝
Ալ վերածնե փլատակներեն, և փառագոչ
Քնարդ առ
Հանո՛ւն Ուժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհեան
Ասավածներուն.
Ջահը ձեռքիդ բագնե բագին համասփռե
Հուր և արյուն։
...Զի մենք հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մե՛նք, զավակներդ Օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս։

Կերտել ժողովրդի կյանքի նոր Արշալույսը. ահա «հեթանոսական» հոսանքի քաղաքական դավանանքը, որ այնպես առնական թափով և բուռն պաթոսով արտահայտել է «հեթանոսական» հոսանքի ամենատաղանդավոր ներկայացուցիչը, առանց որի չի կարելի պատկերացնել հեթանոսական շարժումը։

Նոր Արշալույսի նվաճումը պահանջում էր ուժերի արտակարգ լարում, արիություն, հերոսական ջանքեր, սխրագործություններ, արտաքին «վիշապներուն» տապալելու ուժ, կորով ու կամք։

---

3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, էջ 14։

Ահա թե ինչու Վարուժանի և «Հեթանոսականների» մոտ առանձնակի երրով փառաբանվում են Ուժի, Ըմբոստացման մոտիվները։ Այդ ազատագրական կովի, հայրենասիրական սխրանքների ոգեշնչման կոչ էր։

Ակնհայտ քաղաքական, ազատագրական բովանդակություն ուներ հեթանոսական հոսանքը և հագեցված էր պայծառ գալիքի անմար հավատով, մարտաշունչ ռոմանտիկայով ու արդիական հնչեղությամբ։ Ուժի և Գեղեցիկի, ըմբոստության կոչերը, հերոսականության փառաբանությունը ամբողջովին բխում էր ազատագրական շարժման հարուցած կենսական խնդիրներից։

Այդ էր պահանջում բռնապետական կարգերից ազատագրվելու համազգային սրբազան գործը։ Այս բարձր գաղափարով են հագեցված Վարուժանի 1907—1910-ական թթ. մի շարք գործեր («Վահագն», «Հայրենի լեռներ»), առանձնապես վերջերս հրապարակված «Ըմբոստանքի շեփոր» հոյակապ բանաստեղծությունը։ Ամբողջ ստեղծագործությունը հագեցված է ըմբոստության կոչով, Ազատության փառաբանմամբ, Ուժի և Քաջության դրվատմամբ.

Ընդոստ ոտքի՛
...Եղեք ուժեղ, շանթածին,
Մկանանքով հզոր, սրտով վրիժառու,
Իբրև ծնած կյանքն հսկայ արևու.
Ձեր երակներեն Եփրատի պես բող հոսին,
Եվ Ձեր ռունգերը վառոդի բարկ ծուխին
Թող բացվին լայն.— օ՛ն, ուզեցեք ռազմն արի
Ազատության, գրնել նըժար նըժարի
Երկիրը ձեր, ձեր արյան հետ միասին,
Ուզեցեք ջինջ օդն ընդարձակ երկընքին,
Շանթի լույսով վերելքն հնչուն ժայռերու
Մրրիկներուն մեջ բախումներն ահարկու,
Հեղեղներուն սիրեցեք երգը հըսկա,
Արծվի բները մե՛ր վրա, ձե՛ր վրա...

Բանաստեղծության հետագա հատվածներում հեղինակը ըմբոստանքի կոչ է անում ժողովրդին խորտակելու բռնության ամրոցները։ Նա փառաբանում է ազատությունը մարմնավորող ազատ ու հիասքանչ մայր բնությունը.

...Դեպի բնությո՛ւն, ազատությո՛ւն, դեպի շող,
Դեպի հունձքե՛ր, դեպի հովե՛րն Ստեղծող:
Լայն և ազատ:— Շարժե՛, խոյա՛, ժողովուրդ,
Գաղափարի առյուծ, ցասկի ժայռ ու խուր
Հաղթ քայլերուդ ա՛ռ հորիզոնն առաջնորդ...

Ազատության, ազատ կյանքի փառաբանության մի հիանալի օրինակ է «Հեթանոս երգեր» շարքի «Բեգաս» խորիմաստ քերթվածը։ Պեգասը բանաստեղծի արծվաթռիչ մտքի, վսեմ իդեալի սիմվոլն է։ «Ազատությունը մարդուն և գերությունն աստծո...»․ ահա այդ ստեղծագործության խորքը։ Վարուժանի, Սիամանթոյի, Թեքեյանի, Շանթի «Հեթանոսական» երկերում որպես Ուժի,

Գեղեցիկի հերոսական իդեալների խորհրդանիշ պատկերված են Վահագնը, Անահիտը, Աստղիկը, Վանատուրը, Տիգրանը, Տրդատը, Արտաշեսը, Արտավազդը և հեթանոսական ժամանակների հայկական պանթեոնի անունները իրենց իդեալական վեհ գծերով, սխրալի դյուցազնամարտերով[5]։ Նոր իմաստ, արդիական շունչ, ազատագրական կռվի պաթոս. ահա թե ինչ գծերով են օժտված վաղնջական ժամանակների դիցաբանական և պատմական նորակերտ կերպարները։ Սխալվում էր քննադատ Սուրխաթյանը, երբ 1914 թ. «Նավասարդին» նվիրված գրախոսականում գրում էր. «Ուժի և Գեղեցկության գաղափարը նրանք (իմա՝ «հեթանոսականները»— Ե. Պ.) կապում են անհատապաշտության գաղափարի հետ և հաղորդելով նրանց ազգային գույն ու երանգ, տենչալով «Արտաշեսյան նախնիներու» վորությունն ու «Հայկյան հանճարը», հանդիսանում են ժամանակակից տիրող դասակարգի երգիչները»[6]։

Վարուժանի և Թեքեյանի «հեթանոսական» երգերում կա Ուժի, Գեղեցիկի և հզոր անհատի պաշտամունք, սակայն այլ է այդ անհատապաշտության ակունքն ու էությունը, որ չի նկատել քննադատը։ Վարուժանի և մյուս «հեթանոսականների» ստեղծագործություններում կերտած հզոր անհատներն իրենց հերոսական սխրանքներով ծառայում են ոչ թե տիրող դասակարգին, այլ ժողովրդի ազատագրությանը։ Դրանք ազատագրական կռվի հաղթանակի համար մարտնչող ռոմանտիկական հերոսներ են, համազգային իդեալի իրականացման արարիչներ, որոնց մասին մեծ բանաստեղծն ասել է. «Մարգարեն ապագան կտեսնե, հերոսը կպատրաստե զայն. Հերոսները անիվներ են, որոնց վրա շրջան կառնե հառաջադիմությունը... Առանց զոհի հերոս չկա»[7]։

«Հեթանոսական» հոսանքը ներթափանցված է ոչ միայն ազատագրական պայքարի պաթոսով, այլև բուրժուական իրականության սուր քննադատությամբ։ Այս առանձնակի խորք ու արդիական հնչեղություն է հաղորդում Վարուժանի «Հեթանոս երգեր» գրքին, միաժամանակ բացահայտելով «հեթանոսական» հոսանքի գաղափարական հարստությունը։ Ժամանակակից բուրժուական հասարակության աղաղակող հակասությունները, դրամի պաշտամունքը, սիրո վաճառքը, մարդու նվաստացումը, բարքերի անկումը Վարուժանին մղել են երանելի հեթանոսական ժամանակները, այնտեղ տեսնելով Ուժի, Գեղեցիկի դաշնություն, բարքերի մաքրություն, մարդկայինի կատարյալ հաղթանակ։ «Հարճը» պոեմի ծավալուն քնարական շեղման մեջ գեղարվեստական հիանալի բացահայտում են ստացել բանաստեղծի՝ դեպի հեթանոսական հեռավոր շրջանը կատարած շրջադարձի հասարակական շարժառիթները.

...Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կտիրե,
Փոխան տեգին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է,
Ու կը շողա մութին մեջ, կժանգոտի արևին.
Ոճիրներն այդ խավարի լռության մեջ կդարբնվին
Մրլխոտ ճրագի լույսին տակ ծռած գունատ մարդերին։

---

5 1912 թ. հրատարակած «Նոր քնար» բանաստեղծությունների գրքում Արտ. Հարությունյանը «Կարմիր երկունքում» նկարագրում է Վահագնի ծնունդը՝ այն բնորոշելով «Ծագումն է այս նոր օրվան»։

6 Հ. Սուրխաթյան, Նավասարդ, «Մշակ», 1914, № 79 (ընդգծումը մերն է — Ե. Պ.)։

7 Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 365։

...Բովական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր
Որ անուրջի ճամփած Սեր գնեն մարդիկ Բրեխնուր:

Այսպես է բանաստեղծին ներկայանում ժամանակակից բուրժուական գործիրականությունը: Սոցիալական աղաղակող հակասությունները, համատարած մարդկային տառապանքը, գեղեցիկի անկումը հարկադրել են Վարուժանին երես թեքել ներկայից դեպի հեթանոսական ժամանակները, փառաբանել այն, որպես Ուժի, Գեղեցիկի և Սիրո դաշնության շրջան։

...Փա՜ռք մեծազոր կենցաղին ասպետական դարերուն,
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արքուն,
...Փա՜ռք ձեզի միշտ ով դարեր, ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նման գինիին:

Բանաստեղծը «աստվածատիպ մարդու» իր իդեալը որոնում և գտնում է հեթանոսական ժամանակներում: «Հարճը» պոեմում Վարուժանը էպիկական շնչով, գեղարվեստական վառ պատկերներով փառաբանում է Սերը, Ուժը, Գեղեցիկ, «աստվածատիպ մարդուն», որ մարմնավորում են Տրդատն ու Նազենիկը: Տրդատը հանուն այդ սիրո հաղթանակի ծառանում է Բակուրի դեմ։ Տիրական և բիրտ ուժին կարող է ընդդիմանալ միայն հզոր անհատականությունը, որպիսին է Տրդատը: Այս է բանաստեղծի հերոսապաշտության հասարակական ելակետը։ Տրդատը և նմանները Վարուժանի պատկերացմամբ առաջադիմության հերոսներ են։

Հեթանոսական շրջանը Վարուժանի «Հեթանոս երգեր» բանաստեղծությունների շարքում պատկերված է ոչ միայն որպես Ուժի, այլև ժողովրդի լավագույն գծերի՝ ազնվության, բարոյական մաքրության, մարդու հոգեկան աշխարհի անաղարտ դրսևորման շրջան։ Այստեղ ևս ընդգծված կերպով երևում է բանաստեղծի հասարակական իդեալը։

«Վանատուր» քերթվածում էպիկական թանձր գույներով պատկերելով պտղաբերության աստվածուհու՝ Վանատուրի կենսախինդ կերպարը, բնության հոյակապ արթնացումը, բանաստեղծը արտահայտել է իր հասարակական իդեալը՝ խաղաղության, ժողովրդի ապահով կյանքի երազանքը, այն, ինչ չի գտել կյանքում, որի համար շրջադարձ է կատարել դեպի պատմության վաղընջական ժամանակները.

...Կտուրներեն գեղջկական
Կը բարձրանա ծուխը խունկի պես խաղաղ:
...Ամբարները ողջ խաղաղությամբ կը լեցվին,
Եվ կառասներ՝ ցնծությամբ:

Պատմական անցյալի իդեալականացման տենդենցի հիմքը Վարուժանի, Թեքեյանի և Սիամանթոյի ստեղծագործություններում անբավականությունն *է ներկայից։ Առողջ կենսասիրությունը, ազատասիրությունը, բնությանը հարազատ մնալու ձգտումը, որ խիստ նկատելի է Վարուժանի «հեթանոսական» երգերում, հասարակական բովանդակություն ունեն և ուղղված էին բռնության դեմ, մարդու էությունը աղճատող սոցիալական անարդար հարաբերությունների դեմ։ Վարուժանի մի քանի ստեղծագործություններում «հեթանոսական» անցյալի կորուստը համակված է խորունկ թախիծով և ողբերգականությամբ։ Այս առումով բնորոշ են «Մեռած աստվածներուն», «Աստղիկին» քերթվածնե-*

ը։ Բանաստեղծի քնարական հերոսը խորունկ ցավով սգում է հեթանոս աստվածների մահը, գեղեցիկի անկումը։

Անանց թախիծով է ներծծված բանաստեղծի «Ն.ատղիկին» բանաստեղծությունը։ Գեղեցկության աստվածուհուց որպես գեղեցիկի հուշ մնացել է լոկ կիսանդրին, մարմարյա հպարտ վիզը, լուսավոր ցոլուն աչքերը. չկա նրա էությունը՝ աղատության մարմնացում թևերը, այն, ինչ պակասում է մարդկությանը։

Վարուժանի «Հեթանոս երգեր» շարքի մի քանի բանաստեղծություններում («Գեղեցկության արձանին», «Հեթանոսական», «Սադուռնական» և այլն) որպես վաղնջական ժամանակներին հատուկ կենցաղի բնորոշ գիծ պատկերված է մերկ մարմնի պաշտամունքը։ Այստեղ փառաբանվում է Գեղեցիկը, կինը՝ որպես գեղեցկության մարմնացում։ Այս ստեղծագործություններից հորդում է սերը դեպի մարդը՝ որպես բնության փառասլսակի, հիացմունքը մարդու կատարելությամբ։ Դա մարդուն ազատ տեսնելու ձգտման գեղարվեստական յուրահատուկ արտահայտությունն էր մեր գրականության մեջ։ Եվ միանգամայն ճիշտ էր Հ. Սիրունին, երբ ժամանակին գրում էր, թե «բանաստեղծին համար մարդը ամենեն գեղեցիկն է բնության բովանդակ գեղեցկության մեջ, ամենեն շքեղն ու կատարելատիպը»։ Սիրունին չի պախարակում մերկության պատկերումը արվեստում, դա համարում է «այն իդեալ կերպարանքը, որով հինները իրենց Աստվածը կներկայացնեին»[8]։

Կանացի մերկության պաշտամունքը Վերածննդի դարաշրջանի և հետագա շրջանի եվրոպական կերպարվեստի սիրված, բարձր արվեստով պատկերված թեման է և արտահայտում էր ֆեոդալական կապանքներից կնոջը ազատագրելու, նրան առավել բարձր տեսնելու, գնահատելու, գեղեցիկը պաշտելու տենդենցները։

1914 թ. շեմին լույս տեսավ Վարուժանի և Սիրունու խմբագրած «Նավասարդ» տարեգիրքը, որտեղ զետեղված չափածո և արձակ նյութերի մեծ մասը «հեթանոսական» մոտիվներով էր համակված։ Գրախոսելով «Նավասարդը», Սուրխաթյանը այն որակեց որպես «աչքի ընկնող գործ», «ուշադրության արժանի» տարեգիրք, որտեղ հանդես են եկել «և՛ ռոմանտիկներ, և՛ ռեալիստներ, և՛ նվոզ մենավորներ, բողոքի ու պայքարի ձայներ հնչեցնողներ»։ Նա Վարուժանին անվանում է «հայ հեթանոսների քրմապետ», «արևափառ քուրմ», իսկ Սիամանթոյին՝ «նորադարձ քուրմ»։ Հ. Սիրունին «Դեպի աղբյուր լույսին» հոդվածում Վարուժանի «Հեթանոս երգերը» և Շանթի «Հին աստվածները» նկատի ունենալով, 1913 թ. բնորոշեց որպես «հեթանոսության տարի»[9]։

Ուշագրավ է, թե ինչպե՞ս է ընկալել և ինչպես է գեղարվեստորեն արտացոլել «հեթանոսական» թեման Սիամանթոն։ «Նավասարդյան աղոթք առ դիցուհի Անահիտ» ստեղծագործության մեջ բանաստեղծը Անահիտ աստվածուհուն պատկերել է որպես ժողովրդի վրեժի և ցասման խորհրդանիշ, ազատ, ինքնուրույն կյանքի ոգեկոչող հերոսուհի։ Գաղափարական այս ելակետով նոր թեման սերտորեն շաղկապվում է բանաստեղծի ազատագրական պայքարի

8 «Նավասարդ», Կ. Պոլիս, 1914, էջ 223։

9 Նույն տեղում, էջ 220։ Հ. Սիրունու սույն հոդվածի ընդհանուր տենդենցը խոցելի է։ Այս կապակցությամբ Սուրխաթյանի քննադատությունը տեղին է և ճիշտ։ Արժե հիշատակել, որ տարեգրքի «Արվեստ» թարգմանական հոդվածում պաշտպանվում է գրականության և արվեստի հասարակական նշանակությունը։

մոտիվներին և հաստատում «հեթանոսական» հոսանքի սերտ կապը ազատագրական շարժման գաղափարաբանության հետ։ Ժողովրդին նոր, անհաղթելի, ահեղ, ազատարար աստված պարդևելու համար քնարական հերոսը ջերմեռանդորեն աղոթում է։

Բանաստեղծության մեջ դեղարվեստական հիանալի մարմնավորում է գտել հեղինակի հասարակական իդեալը՝ ազատ, իր բախտի տեր ժողովրդի ցնծությամբ լի ապահով կյանքի երազանքը.

Բազրևանդյան բլուրներեն հեթանոս կյանքը հոսի,
Արևորդիք գեղահասակ, բեհեզներով պարեզոտված,
Աղեղներու, նիզակներու և նետերու վարժեն
Զոհարանիդ սեմին վրա՝
Հաղթ ցուլերու պարանոցին իրենց սուրերը բող սևեռեն...

Ազատության, բողոքի և պայքարի ձայն են հնչեցնում ոչ միայն ճանաչված գրողները, այլև նրանց հետևորդները։ Այսպես, Ահարոնը «Դատաստան» բերթվածում պայքարի է կոչում արևելքի ճնշված ազգերին.

Ո՞վ սեզ ազգեր, որ կապրիք
Պաղեստինեն մինչև Սուրիա և Լիմեն
Մինչև ավազը Լիբիո
Ոտքի՛ ելեք...

Հ. Տեր-Սահակյանի «Եփրատ» բանաստեղծության մեջ ահեղավազ Եփրատը մարմնավորում է հայրենիքի ուժը, վերածնության հույսերը.

Առաջնորդե, Եփրատ Ուժին հայրենի,
Շարժուն երկինք, փառքի ճամբան մեզ եղիր։
...Կը թռիս Եփրատ, ազգի աստված մեզ ընկեր։

Տ. Գասպարյանի «Հրավեր» ոտանավորում արտահայտված է քնարական հերոսի նավասարդյան լուսաբացի բուռն տենչանքը, արքայորդու հայտնության իղձը։

«Նավասարդ» տարեգրքում Վարուժանը հանդես է եկել ծրագրային «Նավասարդյան» բերթվածով և «Հացին երգը» բանաստեղծությունների շարքից՝ «Ցան», «Անդապահը» և «Կակաչներ» քնարական հիանալի գործերով, որտեղ փառաբանվում է բանաստեղծի իդեալը՝ խաղաղ ստեղծագործ աշխատանքը, ինչ երազում և չէր գտնում մեր ժողովուրդը։ Զանց առնելով այս ամենը, Սուրխաթյանը գրում է, որ «Նավասարդին» աշխատակցած «արվեստագետների» բանաստեղծական մոտիվները «տարվանքից», «մերկությունից», «կնոջ մարմնի հրապույրից այն կողմ չեն անցնում»։ Այս կերպ քննադատը խաչ է քաշում «Նավասարդին» տված իր իսկ գնահատականի վրա։

«Զարդարյանը,— գրում է Սուրխաթյանը «Նավասարդին» նվիրած գրախոսականում,— Շանթ-Վարուժան և այլ անհատներից կազմված նորագույն շրթայի օղակներից մեկն է»... Ռ. Զարդարյանի «Բաղինին փառաբանությունը» արձակ գործը, «Նավասարդում» տպագրված «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մեջ» լեգենդը ևս համակված են ժողովրդի ազատագրական պայքարի դա-

զափարով։ «Բագինին փառաբանությունը» գրվածքի քնարական հերոսը ազատատենչ մարտիկ է։ Բռնապետական կարգերի դեմ վրեժով ու ատելությամբ լցված, նա վառում է ազատ, նորոգ կյանքի խորհրդանիշ խարույկը, բոլորի սրտերը հրդեհում պայքարի, ազատության սրբազան կրակով։ Չարդարյանի գործը համակված է մարտաշունչ ոգով, ազատագրական կռվի պաթոսով։

«Ահա մենք վառեցինք խարույկը, որպեսզի խավար աշխարհի մեջ անոր բոցերը ճարճատելով լույս տան բոլոր անոնց, որ անմխիթար են և մոլորված գերության ճամփաներուն վրա։

Մենք վառեցինք Բագինը, որպեսզի հայրենի գեղերն, քաղաքները անոր նային, որպեսզի տանջվածները իրենց բռունցքները սեղմելով՝ դեպի հոն բարձրանան։ Մենք վառեցինք Բագինը, որպեսզի ազատության ճամփան լուսավորենք։ Մենք կդառնանք հին հավատին ու կերկրպագենք նորեն հուրին ու իր տարերային զորությանը։ Թող բորբոքի՛ խարույկը՝ ավելի ուժո՛վ, ավելի կատաղորե՛ն»։

Առավել նշանակալից ստեղծագործություն է Չարդարյանի «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մեջ» լեգենդը։ Չարդարյանն այստեղ իրեն հատուկ սեղմ, ջղուտ ոճով պատկերել է այն սանձարձակ բռնապետական կարգերը, որ թագավորում էին Իրանում և որի դեմ ծառանում է հերոսը՝ ազատաշունչ բանաստեղծ Վուալե Սինան։ Լեգենդը հագեցված է ազատության, ազատ կյանքի փառաբանմամբ։ Արվեստի, արվեստագետի կոչումն է սթափեցնել ժողովրդին, նրա հոգում բորբոքել ազատության, նորոգ կյանքի կրակը։

Երկու հզոր ուժեր են լեգենդում պայքարում՝ Բռնությունն ու Ազատությունը, Խուտեվետ թագավորն ու Վուալե Սինա բանաստեղծը։ Բռնության ամրոցները կարելի է խորտակել հզոր անհատների ջանքերով, հրաշագործ արվեստի ուժով. այս է տվյալ լեգենդի խորքը։

Հեթանոսական դարաշրջանի պաշտամունքով է համակված Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման։ Նրա հերոսները ռոմանտիկական բարձր պաթոսով գովերգում են Սերը, Գեղեցիկը, կյանքն ու իր կռիվը, Ուժի մարմնացում հուրհեր Վահագնը, Գեղեցկության աստվածուհի Աստղիկը։ Ամբողջ դրաման զարգանում է որպես Արևի, Սիրո, Գեղեցիկի, Կյանքի ու Կռվի փառաբանություն։ Այդ գաղափարների գեղարվեստական խոր մարմնավորումներ են Աբեղան, Սեղան, Իշխանը։ Ի հակադրություն քրիստոնեական, վանական ասկետիկ կյանքի, դրամայում հեթանոսական դարաշրջանը պատկերված է որպես Ուժի, Գեղեցիկի, ներդաշնակ կյանքի շրջան։

«Հեթանոսական» մոտիվներին արձագանքել է նաև բանաստեղծ Վահան Թեքեյանը՝ 1914 թ. հրատարակած «Հրաշալի հարություն» գրքի «Հայրենի զրույցներու վրա» բանաստեղծությունների շարքով։ 1902—1913 թթ. գրած բանաստեղծությունների շարքը արդիական հնչեղություն է ստացել գրքի «Հրաշալի հարություն» խորագրով, մանավանդ «Փա՜ռ, հրաշալի հարությանն» բնաբանով։ Այստեղ համախմբված բանաստեղծությունները յուրովի արձագանքում են «Հեթանոսական» հոսանքի հարուցած խնդիրներին, ազատագրական շարժման գաղափարներին, համազգային հայրենասիրական այն տրամադրություններին, որ 1910-ական թթ. հուզում էին արևմտահայությանը։ Ի տարբերություն Վարուժանի և Սիամանթոյի, Թեքեյանի քնարական հերոսները ոչ թե աստվածներ են, այլ պատմական անձնավորություններ (Արշակ Ա, Տրդատ

Ա, Արտավազդ Բ և այլն), որոնք մարտնչել են Հայաստանի ինքնուրույնության, անկախ պետականության ստեղծման ու պահպանման համար։

Հրաշալի հարություն. ահա Թեքեյանի քաղաքական իդեալը, որ բացորոշ արտահայտվել է «Հայրենի զրույցներու վրա» բանաստեղծությունների շարքում։ Բանաստեղծի երազած հրաշալի հարության իդեալը սերում էր այդ տարիներին Արևմտյան Հայաստանում տիրապետող հայրենասիրական, ազատագրական երազներից.

...Ես այդ Վաղվան լույսին, ճովին, անձրևին
Եվ անոնց մեջ բացվելիք նոր վարդերուն
Դեռ կերազեմ և կցանկամ ճողին՝
Ու ազգերու մեջ ո՞վ իմ Ազգս, ապրիս դուն...
Ի՞նչ բաղցրություն, երջանկություն վերջապես.
Երբ վաղն ատոու երկինք լուսնա մեր վրա,
Եվ օ՜ճ, արդեն մինչ խավարին կերգեմ ես,
Քնարիս վրա տեսնք նանանչը կիյնա...

Վահան Թեքեյանի «Հրաշալի հարություն» գրքի ընդհանուր ոգու, բանաստեղծի հասարակական իդեալի ռոմանտիկ բնույթի բացահայտման համար շատ կարևոր է գրքի խորագրի հեղինակային մեկնաբանությունը։ «Դրքի վերնագիրը,— գրում է Թեքեյանը,— գրեթե կրոնական իմաստով մը առած է։ Հրաշալին անշուշտ «հրաշքով» կնշանակե և այն Հարությունը հարությունն է անցյալին ամբողջ, հոգիի մը անցյալին և բանաստեղծությունն է, որ այս հրաշքը կարելի կրնե»[10]։

«Հեթանոսական» հոսանքին հարած մեծ բանաստեղծների՝ Վարուժանի, Սիամանթոյի երգերին հատուկ ըմբոստության կոչերը, պայքարի մոտիվները խորթ չեն նաև Վահան Թեքեյանին։ Բանաստեղծի խորին համոզմամբ ժողովրդի կյանքի պայծառ գալիքը՝ «հրաշալի հարություն», կարելի է նվաճել միայն համաժողովրդական ազատագրական կռվով։ «Լի եմ բանդումի մրրկով անբավ»,— աղաղակում է «նավասարդում» տպագրված «Վրեժի գինին» բանաստեղծության քնարական հերոսը։

«Հեթանոսական» հոսանքի հետապնդած քաղաքական նպատակադրումը՝ նոր Արշալույսի նվաճումը, Թեքեյանն արտահայտել է «Զոն», «Արտավազդ Բ» բանաստեղծություններում։ Տարբեր տարիներին գրած «Հայրենի զրույցներու վրա» բանաստեղծությունների շարքը իրար հետ կապված են նշված գաղափարական ընդհանուր շաղախով։ Այստեղ ևս մերթ քնքույշ ու քնարական, մերթ՝ սիրալեղ ու խախծածոր և մերթ էլ ցասկոտ ու զայրագին հնչում են Թեքեյանի քնարի լարերը։

Հաստատապես կարելի է ասել, որ «Հեթանոսական» հոսանքն իր ավարտումը գտավ «Նավասարդ» տարեգրքում։ Չի կարելի հավասարության նշան դնել «Նավասարդի» և «Մեհեանի» միջև. ըստ էության տարբեր է նրանց ուղղությունը։

«Հեթանոսական» հոսանքի արծարծած տարբեր մոտիվների արձագանք պետք է համարել այսպես կոչված հետևորդների՝ Հ. Սիրունու «Դեպի տաճարն

10 Վ. Թեքեյան, Հրաշալի հարություն, Պոլիս, 1914, էջ 194։

Հրաշքի», Ահարոնի «Բագիններուս կրակին դեմ» գրքույկները, Լ. Էսաճանյանի «Ցեղին հուռութքը», «Արքայական սիրերգություն», «Արևելքը իմ հողիս է» բանաստեղծությունները։

1914 թ. հրատարակված Սիրունու «Դեպի տաճարն Հրաշքի» բանաստեղծությունների գրքույկի հիմնական մոտիվը «հեթանոսական» սերն է՝ «Գեղեցկության», «Կնոջ», «Ուժին», «Կիրքին», «Իդեալին» փառաբանությունը։ Ահարոնի «Բագիններուս կրակին դեմ» (1910—1914 թթ.) անտիպ բանաստեղծությունների ժողովածուում իշխողը հեթանոսական հերոսական մոտիվներն են («Վահագնին», «Անահիտ», «Հաղթանակ», «Շամիրամ», «Արամազդ» և այլն)։ Արձագանքելով հեթանոսական պոեզիայի մեջ ծանոթ մոտիվներին, Սիրունու, Ահարոնի, Էսաճանյանի բանաստեղծությունները տառապում են գեղարվեստական լուրջ թերություններով, չոր են, անհույզ ու անկիրք, Վարուժանի այս կամ այն մոտիվի անհաջող կրկնությունը։

Հարկ է նշել, որ Վարուժանի, Սիամանթոյի, Թեքեյանի, Շանթի, Զարդարյանի և մյուսների «հեթանոսական» երկերում Ուժի, Գեղեցիկի, Ըմբոստացման գաղափարները մարմնավորող հեթանոս աստվածների և պատմական հերոսական անձնավորությունների պաշտամունքը արտահայտում է ոչ միայն ազատագրական կռվի պաթոսը, այլև թուլությունը, այն իրոք անհաղթահարելի խոչընդոտները, որ ընկած էին արևմտահայության ազատագրության դժվարին ճանապարհին։ Դրա համար էին նրանք ապավինում և փառաբանում հեթանոսական հզոր աստվածներին, այն պատմական անձնավորություններին, որոնք գլխավորել են ժողովրդի հերոսական կռիվները օտարերկրյա զավթիչների դեմ։

«Հեթանոսական» հոսանքին հարած հեղինակների երկերը զերծ չեն և չէին էլ կարող զերծ լինել գաղափարական-գեղարվեստական թուլություններից ու թերություններից (հեթանոսական անցյալի չափից ավելի իդեալականացման տենդենցներ, նատուրալիստական բաց նկարագրություններ)։ Անկասկած, այստեղ նկատելի է նաև եվրոպական մոդեռն գրական հովերի ազդեցությունը, որ արտակարգ չափազանցված ներկայացվեց արևելահայ քննադատության կողմից։

Իդեալի և իրականության հակասությունը, իդեալի իրականացման անհաղթահարելի դժվարությունները «հեթանոսական» հոսանքին հարած հեղինակներին հարկադրել են շրջադարձ կատարել դեպի պատմության հեռավոր ժամանակները, նրանց երկերը համակելով լուսավոր ռոմանտիզմով։ Ինքնին հասկանալի է, որ 1910-ական թթ. այդ ռոմանտիզմը չէր կարող հանդես գալ անխառն կերպով, այլ գրական նոր հոսանքների ավելի կամ պակաս ներթափանցմամբ միայն։

Ընդհանուր գծերով այս է «հեթանոսական» հոսանքի պատկերը[11]։

---

11 Այս մասին տե՛ս Վ. Տ ե ր յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, 1961, էջ 293—294։ Վ. Պ ա ր տ ի զ ու ն ի, Գրականության ուժն ու հմայքը, 1963, էջ 252—267։ Նույնի՝ Վահան Տերյան, 1968, էջ 382—409։ Է դ. Ջ ր ր ա շ յ ա ն, Թումանյանի պոեմները, 1963, էջ 491—497։ Հ ր. Թ ա մ ր ա զ յ ա ն, Սիամանթո, 1964, էջ 205—206։ Ա ր. Ի ն ճ ի կ յ ա ն, Մտերիմներ և մտորումներ, 1967, էջ 311։

«ЯЗЫЧЕСКОЕ» ЛИТЕРАТУРНОЕ ТЕЧЕНИЕ В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Доктор филол. наук Е. М. ПЕТРОСЯН

(Р е з ю м е)

Художественное отражение языческих времен является одной из важных тем западноармянской литературы 10-х годов текущего столетия. Рассматривая «языческие» произведения известных западноармянских поэтов и писателей (Д. Варужана, В. Текеяна, Сиаманто, Л. Шанта, Р. Зардаряна и других), автор статьи считает «языческое» течение в целом плодом западноармянской действительности, своеобразным художественным отражением освободительных и патриотических идей. Показывается, что «языческое» течение было проникнуто острой критикой буржуазной действительности. Восхваление языческих богов и деятелей того времени, культа Силы и Красоты отражает не только пафос освободительной борьбы, но и ее слабость, обусловленную теми неодолимыми трудностями, которые стояли на ее пути. Отсюда и характерный для «языческой» поэзии романтизм.